DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA
ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ

Archbishop Khajag Barsamian, Primate


Թիւ 1938
Դեկտեմբեր 20, 1994

Ազնուափայլ
Տիկին Եղիսաբէթ Պարոնեան
Ռիչմընտ.

Ազնիւ Տիկին Պարոնեան,

Մեզի համար ուրախութիւն էր վերստին ձեզ տեսնել Ռիչմընտի մէջ գումարուած Դպրաց Դասերու Միութեան տարեկան համագումարին առթիւ։

Մեր ուրախութիւնն ու շնորհակալութիւնը կը յայտնենք ձեզի, որ ազնուաբար ձեր «հոգատարութեան» ներքեւ առած է Ս. Յակոբ Եկեղեցւոյ երիտասարդ հովիւ Արժշ. Տ. Նարեկ Վրդ. Պէրպէրեանը, որ ամէն ջանք ի գործ կը դնէ իրեն վստահուած պաշտօնն ու պարտականութիւնները լաւագոյնս կատարելու համար։

Ընդունեցէք նաեւ մեր շնորհակալութիւնը՝ մեզի յանձնած ձեր նուէրին համար։

Այս առթիւ կը շնորհաւորենք Նոր Տարին եւ Յիսուս Քրիստոսի Ծնունդը։ Թող խաղաղութեան մեծ Իշխանի ծննդեան հրաշք աւետիսը ձեզ ու ձեր հարազատները հոգեպէս ու մարմնապէս զօրացնէ, եւ դուք շարունակէք ապրիլ աւելի քաջառողջ, երկար եւ արդիւնաւոր տարիներ։

Սիրոյ ողջունիւ

Խաժակ Արք. Պարսամեան
Առաջնորդ


630 SECOND AVENUE, NEW YORK, NY 10016-4885 TELEPHONE 212.686.0710 FAX 212.779.3558